Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

30 մարտի, 2016թ.
Թիվ 002

Փորձագետի ակնարկ

www.ichd.org

Կենցաղը, ժողովրդագրությունն ու կենսաթոշակային համակարգը

Վերջին 15 տարիներին ժողովրդագրությունը էականորեն փոխվել է: Այսօր չենք կարող ապրել նույն կենցաղով, որով ապրել ենք երբ երեխա ենք ունեցել ու ընտանիքի մասին ձևավորվել են մեր պատկերացումները: Մինչդեռ այս պատկերացումները մեզ առաջնորդեցին կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ կարծիք ու դիրքորոշում ձևավորելիս: Մեր ապրելակերպը կտրուկ փոփոխությունների է ենթարկվում ու տարբեր քաղաքականություններում այդ փոփոխությունը հաշվի առնելը օրվա հրամայականն է:



Աշոտ Խուրշուդյանը Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի փորձագետն է: Աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկում, ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում: Մասնակցել է Հայաստանի տնտեսական բազմաթիվ բարեփոխումների: Տնտեսագիտության թեկնածու է:

akhurshudyan@ichd.org

Չերևացող հզոր փոփոխությունների մասին

Ապագան պլանավորելը հեշտ բան չի: Մանկություն, պատանեկություն, ուսում, աշխատանք: Բայց մի բան կա, որն աննկատ մեր մեջ է ու չենք մտածում դրա շուրջ: Խոսքը ավանդական կենցաղի մասին է, ինչը ենթադրում է, որ բոլորը նույն ապրելակերպն ունեն: Երեխաները սովորաբար փորձում են կրկնել ծնողների վարքագիծը, նրանք ինչ-որ պատկերացում ունեն ընտանիքի, նրա անդամների մասին: Առաջին կոնֆլիկտը ծագում է ամուսնությունից հետո, երբ մեկ տանը միատեղվում են տարբեր կենցաղից մարդիկ ու սկսում են զարմանալ, հարմարվել կամ էլ փոխվել: Նույնիսկ պարզ կենցաղային տարբերությունները կարող են զարմացնել զույգին՝ ո՞րն է ճիշտ՝ «դուռու՞մ», թե՞ «բուռում»: Մեկի տանը «դուռում են» ասել, մյուսի տանը «բուռում»: Հասարակ բարբառային տարբերությունը հաճախ չենք նկատում՝ մտածելով թե ճիշտը մեր «ձևն» է: Այս ամենը կմնար թեթև ներկենցաղային տարբերությունների շրջանակում, եթե փոխված չլիներ շատ ազդեցիկ գործոն՝ ժողովրդագրությունը: Իսկ այն էականորեն փոխվել է, այն կյանքը ինչ տեսել ենք մեր ընտանիքներում որպես երեխա, մեր երեխաների համար այլ իրականություն է լինելու:

Կարևորի մասին՝ ընտանիք

Ի՞նչ է փոխվել, որ չենք նկատել: Եթե քսան տարի առաջ հարցնեինք ե՞րբ է պետք ամուսնանալ, հաճախ կլսեինք «մինչև 20 տարեկանը», տաս տարի առաջ պատասխանը փոխվում ու դառնում է «մինչև 25 տարեկանը», հետո «մինչև 30 տարեկանը»: Այո՛, այսօր էլ, նախկինում էլ ամուսնանում էին, երեխա ունենում, մեծանում, ապահովում երեխաների ապագան ու ծնողների ծերությունը: Իհարկե՛, այս օրինաչությունը տարածված էր, բայց նախկինում էլ ու այսօր էլ եթե նայենք մեր շուրջը, կնկատենք կանանց, որ առաջին զավակը ունենում են 35-40 տարեկանում, ոմանք ունենում են առանց ամուսնանալու, իսկ տղամարդիկ էլ սկսել են ավելի ուշ ամուսնանալ և ավելի մեծ տարիքում երեխա ունենալ: Ու ի՞նչ է սա փոխում, ի՞նչով են ուշ տարիքում երեխա ունեցողները տարբերվում «ավանդական շուտ տարիքում ամուսնացողներից»: Եկեք հաշվենք: Դուք ամուսնացել եք 35 տարեկանում, ձեր առաջնեկը ծնվել է 36 տարեկանում: Ձեր զավակը՝ նույնպես, ու ձեր առաջին թոռը կունենաք 72 տարեկանում: Ավանդական

մոդելը, երբ տատիկ-պապիկները աջակցում են թոռներին պահելուն ու մեծացնելուն այս ընտանիքների համար նույն կերպ չի գործի՝ երբ նրանք էին երեխա: Ավելին, շատ երիտասարդների համար դժվար կլինի միաժամանակ և՛ ծնողներին հոգ տանել, և՛ սեփական երեխաների ապագան հոգալ: Ապրելակերպը կտրուկ փոխվում է շատերի համար՝ մինչդեռ մտածելակերպը մնում է կենցաղային ավանդականը, ու սրան շատերը պատրաստ չեն:

Խոսենք թվերով

Փորձենք իրավիճակը հասկանալ թվերով: Ի վերջո միշտ էլ եղել են ուշ ամուսնացողներ, ուշ տարիքում երեխա ունեցողներ: Նայենք թե ինչպես է փոխվել ամուսնության տարիքը վերջին 15 տարիների ընթացքում:



Գրաֆիկից երևում է, որ 15 տարվա մեջ նվազել է 16-19 տարեկանների ամուսնությունը, էականորեն նվազել է 20-24 տարեկանների ամուսնությունը, զուգահեռաբար աճել է ամուսնության մնացած տարիքայի խմբերը:

Ամուսնության տարիքային խմբերը եթե բաժանենք 16-24, 25-29 և 30-ից բարձրի, ապա ավելի ակնհայտ կերևա ամուսնության տարիքի կտրուկ փոփոխությունը:



Ամուսնությունների առնվազն մեկ-երրորդը արդեն բաժին է ընկնում 30-ից բարձր տարիքի երիտասարդների, իսկ եթե նախկինում 16-24 տարեկանները կազմում էին ամուսնությունների կեսը, ապա այսօր այն ընդամենը 35 տոկոսն է: Նույնսիկ այս գրաֆիկը ցույց չի տալիս կտրուկ փոփոխությունները: Տղաների ու աղջիկների ամուսնության տարիքային խմբերը տարբեր են: Եկենք նայենք ամուսնություններն ըստ սեռերի:



Եթե 15 տարի առաջ ամուսնությունների 80 տոկոսը բաժին էր ընկնում 16-24 տարեկան կանանց, ապա այսօր այդ մասնաբաժինը ընդհանուր ամուսնությունների կեսից քիչն է: Փոխարենը կայուն աճում է 25-29 և 30-ից բարձր տարիքում ամուսնացող կանայք:



Տղամարդկանց դեպքում փոփոխության պատկերն ավելի կտրուկ է: Եթե ամուսնության մասնաբաժինը 25-29 տարեկանների մոտ վերջին 15 տարում մնացել է նույնը, 16-24 տարեկանների ամուսնությունը կտրուկ նվազել է՝ 35-ից իջնելով 20%: Փոխարենը 30-նն անց տղամարդկանց ամուսնությունը կտրուկ աճել է:

Տեսանք, թե ինչպես փոփոխության դինամիկաները կտրուկ փոխվեցին, երբ կանանց ու տղամարդկանց վիճակագրությունն առանձնացրեցինք: Եթե առանձնացնենք գյուղ-քաղաք, նայենք նաև չամուսնացնողների թվերին, միայնակ ապրողների թվերին, ապա առավել կտրուկ տարբերություններ կտեսնենք: Ասածս այն է, որ վաղուց չկա ավանդական տարիքի, միջինացված, ընդհանուր մոդելային ընտանիք հասկացություն: Ընտանիքները տարբեր են, ամուսնության տարիքները տարբեր են, ապրելակերպն ու կենցաղը տարբեր են, միմյանց հոգ տանելու աստիճանը տարբեր է:

Ինչու՞ եմ սրա մասին խոսում

Երբեմն բանավեճի ժամանակ լսում եմ կարծիքներ, որոնք ինձ թվում են կարևոր: Մի անգամ պարտադիր կենսաթոշակային նոր համակարգի ներմուծման բանավեճի ժամանակ լսեցի հետևյալ փաստարկումը, թե «ինձ պետք չի խնայել ապագայի համար, իմ երեխաները ինձ կպահեն, ինչպես իմ ծնողներն են ինձ մեծացրել»: Կամ էլ. «Լավ ծնողը պետք է այնպես դաստիարակի իր երեխաներին, որ երեխաները հոգ տանեն ծնողների ապագայի համար, ոչ թե կենսաթոշակային համակարգը»:

Այո՛, կենսաթոշակային համակարգը անսովոր է. Չի թողնում այսօրվա վաստակած եկամուտը ծախսել՝ հետաձգելով այն ապագայի համար: Սակայն փաստերով ցանկացա ինքս էլ նայել, թե ինչպես է փոփոխվել ընտանիքը, ու արդյոք մենք կարողանալու ենք կրկնել այն, ինչ մեր ծնողներն են մեզ համար արել: Մի մասը այո: Սակայն թվերը ցույց են տալիս, որ փոխելով մի փոքր գործոն՝ ամուսնության տարիքը, շատերը չեն կարողանա կրկնել նույն ընտանեկան կյանքը, ինչ տեսել են: Շատ ծնողներ չեն կարող օգնել իրենց երեխաներին, երբ նրանք դրա կարիքը զգան, իսկ շատ երեխաներ չեն կարող օգնել իրենց ծնողներին:

Կտրուկ փոփոխությունները

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման նպատակը տարբերակված մոտեցումն է, երբ քո այսօրվա վաստակած գումարը ստանաս ապագայում՝ ինքդ քեզ հոգ տանես, երբ անցնես թոշակի: Ու համակարգը տարբերակված է, քանի որ տարբեր մարդիկ տարբեր եկամուտ են ունենում, ու ըստ իրենց եկամտի մասշտաբի էլ կկուտակեն իրենց թոշակը: Նայելով ժողովրդագրության տվյալներին, միշտ կարծել եմ, որ պարտադիր

կուտակային կենսաթոշակային համակարգը պետք էր ներդրվեր շատ ավելի վաղ: Սա մի համակարգ է, որը հնարավորություն է տալիս տասնամյակներ անց աշխատողներին իրենց թոշակի անցնելուց հետո պահելու հոգսը թեթևացնել՝ չդառնալ զավակների համար լրացուցիչ «ծախսի ուղղություն»: Նշածս փոփոխությունները ապագայում են, ու այսօր շատ-շատերը այն չեն կարող պատկերացնել՝ թվերին ու գրաֆիկներին նայելը մի բան է՝ զգալը այլ: Մանավանդ, որ կան մարդիկ, որոնց համար ապագայի հանդեպ վերաբերմունքը այսպիսին է «դե մի բան կանենք»:

Ցավոք իշխանությունները չկարողացան հասկանալի բացատրել գալիք փոփոխությունները: Չեմ պնդում թե ես էլ իդեալական ներկայացրի գալիք փոփոխությունները: Սակայն մի բան ակնհայտ է ժողովրդագրական վիճակը՝ բնակչության սեռա-տարիքային փոփոխությունը ու կենցաղի փոփոխությունը այնպիսի մեծ ուժ է, որ անհնար է դրա դեմ դուրս գալ, պետք է հարմարվել այդ փոփոխություններին:

Իսկ կենցաղը ռեֆորմով չի որ փոխվելու է. Այն փոխվելու է ավելի դաժանորեն, երբ ժամանակը գա ու նոր դժվարությունները սկսվեն. փոխվելու է և՛ ծնողների հանդեպ վերաբերմունքը, և՛ ծերանոցների հանդեպ վերաբերմունքը, և՛ զավակների ու հատկապես թոռ պահելու կենցաղը: Թոշակը դառնալու է ծեր մարդու անկախ եկամտի հիմնական գրավականը ու նաև զավակին օգնելու լրացուցիչ հնարավորությունը:

Նրանք ովքեր այսօր նորմալ վաստակում են, այսպես ասած միջին խավը, որը հիմնականում էլ ընդվզեց կենսաթոշակային բարեփոխումների դեմ, այսօր իրենց ծնողներին թոշակի հույսին չեն թողնում: Մինչդեռ, երբ իրենք դառնան թոշակառու, շատերի զավակների համար նույնը անելը լինելու է չափազանց դժվար: Երիտասարդներն այսօր սա չեն տեսնում, դե ո՞ր մի երիտասարդն է իր 20 ամյա տարիքում պլանավորում, թե ինչպես է ապրելու 65-անց տարիքում:

Առաջարկություններ

Բնակչությանը ու նաև ընթերցողներիս ես չեմ կարող որևէ բան առաջարկել: Մարդու արժեքները, կենցաղը ու ընտանիքը բաներ են, որ մի քանի էջ խոսքով չի, որ փոխվում է: Սակայն ցանկացա ցուցադրել, որ «ընդհանրացված» մոդելից դուրս ենք եկել վաղուց, որ այսօր ընտանիքները շատ տարբեր են: Ամուսնանում են տարբեր տարիքային խմբերում, մի մասը չի ամուսնանում ընդհանրապես: Ու սա ժամանակի հետ բերելու է նոր կենցաղային

> «Հովսեփը մի խելամիտ առաջարկ արեց: Նա ասաց, որ փարավոնը պետք է մի «խոհեմ ու իմաստուն մարդ» գտնի, որպեսզի նա հոգ տանի, որ առատության տարիներին հացահատիկը հավաքվի պահեստներում, իսկ հետո, երբ սկսվեն սովի տարիները, մատակարարվի մարդկանց»
>
> *Ծննդոց 41:33-36*

խնդիրների, որոնց շատերը պատրաստ չեն: Միակ ցանկությունս էր սրա շուրջ մտորելը, ապագայի մասին այսօր հոգ տանելու մասին խորհելը:

Կառավարությանը

Վերոնշյալ ժողովրդագրական փոփոխությունները միայն եկամտին, ներընտանեկան կենցաղին ու թոշակին չեն առնչվում: Փոխվելու են առողջապահական կարիքները, փոխվելու է տրանսպորտային կարիքները, փոխվելու են քաղաքաշինական կարիքները: Ինչքանո՞վ ենք մենք սրան պատրաստ: Այսօր նման հետազոտություններ չեն արվում, այս ապագա կարիքները հաշվի չեն առնվում:

Կենսաթոշակային բարեփոխումների պատասխանատուներին

Մարդկանց հետ շփվելուց մի բան եմ հասկացել: Այն ինչ գրել եմ, բնակչությանը չի բացատրվում: Մարդիկ պարտադիր կենսաթոշակայինը ընդունեցին որպես հարկերի բարձրացում, որպես այսօրվա իրենց եկամտի հանդեպ «ոտնձգություն»: Ավելին, բարեփոխումները, որոնք իրոք բխում են ժողովրդագրական փոփոխության կարիքներից, այդպես էլ չեն անդրադարձել այն մարդկանց, որոնք հարկ չեն վճարում՝ գործազուրկներին, ստվերում աշխատողներին, գյուղացիական տնտեսություններին և այլն: Զինվորական, դատական ու նման այլ կառույցներ էլ ունեն սեփական այլ կենսաթոշակային համակարգ՝ նրանց չինտեգրեցին պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մեջ՝ մինչդեռ ժողովրդագրությունը նրանց էլ է վերաբերում: Ես լուծումներ չունեմ այստեղ, սակայն

վերոնշյալ խնդիրը հարվածելու է բոլորին: Կենսաթոշակային բարեփոխումը ծածկում է միայն Հայաստանի բնակչության մի մասի: Առնվազն պետք է հասնենք նրա, որ ստվերում աշխատող գործատուները իրենց աշխատողների կենսաթոշակը նույնպես ապահովեն՝ այսինքն եկամուտները բերեն օրինական դաշտ, հնարավորություն տան մարդկանց ունենալ սեփական կենսաթոշակային պլան: Իսկ եթե սա էլ է անհնար, առնվազն անհրաժեշտ է մարդկանց մոտ խնայելու հակում ձևավորելուն ուղղված քաղաքականություն մշակել՝ թեթևացնել ապագա սերունդների հոգսը: Առայժմ թվերը ցույց են տալիս, որ մարդիկ ավելի շատ են սիրում ծախսել ու վարկ վերցնել. մենք խնայող չենք:

ՀԳ

Ի դեպ, կուտակած կենսաթոշակը պետք է նաև բարձրացնի մարդկանց վարկունակությունը: Ըստ էության, երբ բանկային համակարգը սկսի կուտակած կենսաթոշակը դիտարկել որպես վարկ տրամադրելու երաշխիք, մարդիկ կարող են նաև ծախսել այսօր, ու այս դեպքում ապագայի ռիսկը կլինի իրենց որոշումը, իրենց ռիսկը:

ՀՀԳ

Գրածս վերաբերում է միայն Կուտակային կենսաթոշակային համակարգի կարիքին. Դրույքի, օրենսդրության, համակարգի, ներդրման ու նման մանրամասների մասին այստեղ կարծիքս չեմ արտահայտել:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը խորհրդային և հարավկովկասյան երկրների համանման կազմակերպությունների ցանկում ինքնատիպ և ազդեցիկ վերլուծական կենտրոնի համբավ ունի: Իրադարձություններով հարուստ իր ողջ պատմության ընթացքում Կենտրոնը հավատարմորեն հետևել է իր հիմնական սկզբունքներին և նպատակներին, մասնավորապես՝ միավորել հասարակական, գիտական, մշակութային և գործարար ոլորտների կարող և առաջադեմ միտքը, հզորացնել ժողովրդավարական մեխանիզմներն ու սերմանել ազատ շուկայական մեխանիզմներ՝ նպաստ բերելով կովկասյան երկրների տարածաշրջանային համագործակցության և տնտեսական զարգացման ռազմավարությունների մշակման գործընթացին: